

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 065 մասնագիտական խորհրդի նիստում ս/թ. նոյեմբերի 5-ին ժամը 14:30-ին տեղի է ունենալու Էրիկ Զավենի Մարտիրոսյանի «Դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացումն աթլետիկական վարժությունների կիրառմամբ» թեմայով ԺԳ.00.02 - Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության պաշպանությունը (սեղմագիրը կցվում է):

Հարգանքով՝ Մ.Բարբարյան

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷՐԻԿ ԶԱՎԵՆԻ

**ԴԵՌԱՀԱՍ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄՆ ԱԹԼԵՏԻԿԱԿԱՆ
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ**

ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Արտակ Գառնիկի Ստեփանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝

Աշոտ Աղվանի Չատինյան

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Հովհաննես Հրահատի Գաբրիելյան

Առաջատար կազմակերպություն՝

**Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. նոյեմբերի 5-ին ժամը 14³⁰-ին Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում գործող ԲՈՒԿ-ի ՍՄանկավարժության՝ 065 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0070, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, թիվ 201 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքվել է 2020թ. սեպտեմբերի 23-ին

Մասնագիտական խորհրդի գլխավոր քարտուղար՝ մանկավարժական
գիտությունների թեկնածու Մ. Ս. Բարբարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Աճող սերունդի ֆիզիկական պատրաստության բարելավման խնդիրը սոցիալ-մանկավարժական առաջնահերթ հիմնահարցերից է:

Դեռահաս դպրոցականների առողջության ամրապնդման և շարժողական պատրաստությանն ուղղված աշխատանքի կազմակերպման հեռանկարային ուղղություններից մեկը դպրոցականների ֆիզիկական դաստիարակության ծրագրերի արդիականացումն է: Այն ենթադրում է մարզաառողջարարական արտադասարանական լրացուցիչ պարապմունքների կիրառում՝ որոշակի մարզաձևերի օրինակով: Ցավոք, այդ մոտեցումները դեռևս լայն կիրառում չեն գտել հանրակրթության ֆիզիկական դաստիարակության համակարգում (Гибадуллин М. Р. 2010, Ավանեսով Է. Յու. 2014, Սկրտչյան Թ. Լ. 2016): Ներկայումս հանրակրթական դպրոցներում, ֆիզիկական դաստիարակության կազմակերպման ֆիզկուլտուրասպորտային նոր գաղափարների և մոտեցումների որոշակի փնտրտուք է սկսվել, բայց դրանք, որպես կանոն, ոչ լիովին են իրագործվում և չեն արտացոլում քննարկված հարցի բոլոր կողմերը, իրենց մեջ չեն ներառում նոր ծրագրեր և տեխնոլոգիաներ: Չնայած առկա որոշ փորձին՝ մեր երկրում այս հարցերը դեռևս լիովին ուսումնասիրված չեն: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է հանրակրթական դպրոցներում արտադասարանական պարապմունքների՝ աթլետիկական վարժությունների օրինակով սպորտային կողմնորոշիչ ֆիզիկական դաստիարակության բովանդակության և նրա արդյունավետության գնահատմանը: Անհրաժեշտ է մասնագետների ուշադրությունը հրավիրել հատկապես այս հարցերի ուսումնասիրման վրա:

ՀՀ հանրակրթական դպրոցներում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի պետական գործող ծրագրերում՝ որպես պարտադիր և հիմնական բաղադրիչ, ներառված է աթլետիկան (Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս. 2009, Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս. 2012): Աթլետիկական վարժությունների կիրառման միջոցով ֆիզիկական դաստիարակության կատարելագործման խնդիրները, մեր կարծիքով, բավարար չափով ներկայացված չեն:

Առողջ սերունդ դաստիարակելու խնդիրն այսօր ձեռք է բերում խիստ կարևոր նշանակություն՝ պայմանավորված երեխաների և դեռահասների առողջության վիճակագրական ցուցանիշների վատթարացմամբ: Ուսումնական խիստ բեռնվածության և խրոնիկական հոգնածության պայմաններում ֆիզիկական դաստիարակության միջոցների հաճախակի կիրառումն էական առողջարարական արդյունք չի ապահովում (Виленская Т. К. 2005, Романович В. А. 2010, Шeverницкая М. А. 2013): Այդ իրավիճակից դուրս գալու ուղիներից է ֆիզիկական դաստիարակության դասավանդման գործընթացում նոր մոտեցումների մշակումը և առողջարարական համալիր միջոցների կիրառումը: Վերոհիշյալը վկայում է, որ գոյություն ունեն բացթողումներ առողջ սերունդ դաստիարակելու խնդիրներում և մարզաառողջարարական լրացուցիչ (աթլետիկական) պարապմունքների իրականացման հիմքում: Այս գործընթացի մեթոդական ապահովումը, հատկապես ծրագրերի մշակումը, արդիական է և ունի կիրառական կարևոր նշանակություն այս բացթողումների լուծման համար: Աթլետիկական վարժությունների շնորհիվ կբարելավվեն ոչ միայն շարժողական պատրաստվածության ցուցանիշները, այլև կամրապնդվեն սրտանոթային և շնչառական համակարգերը (Փարբեր Դ. Ա. 1988, Хрипкова А. Г., с соавт. 1990), կբարձրանա աշխատունակության մակարդակը (Ղազարյան Ֆ. Գ. 1987, Խիթարյան Դ. Ս., 2003, Խաչատրյան Ա. Ռ. 2003): Մինևույն ժամանակ այն կնպաստի դպրոցականների շարժողական ներուժի բարձրացմանը, ինչպես նաև կնախապատրաստի՝ Ազգային բանակում ծառայելուն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ: Մշակել և գիտափորձով հիմնավորել աթլետիկական արտադասարանական պարապմունքների բովանդակությունը և անցկացման մեթոդիկական՝ ուղղված դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Առաջադրված վարկածին և նպատակին համապատասխան՝ աշխատության մեջ լուծվել են մի շարք խնդիրներ. 10-13 տարեկան դեռահաս դպրոցականների ֆիզիկական վիճակի վերաբերյալ մշտադիտարկման անցկացում, ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների մակարդակի գնահատման համար մոդելային սանդղակների մշակում, աթլետիկայի արտադասարանական պարապմունքների ծրագրի մշակում և արդյունավետության բացահայտում:

Հետազոտության մասնակի խնդիրները ներկայացված են աշխատանքի երկրորդ և երրորդ գլուխներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՑԸ: Սույն աշխատանքի գիտական նորույթը հետևյալն է՝

➤ Որոշվել են ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստության սեռատարիքային առանձնահատկությունները 10-13 տարեկան դեռահաս դպրոցականների շրջանում:

➤ Մշակված են ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակներ երկսեռ դպրոցականների համար:

➤ Հիմնավորված են աթլետիկայի արտադասարանական պարապմունքների ծրագրի բովանդակությունը և անցկացման մեթոդական առանձնահատկությունները:

➤ Ապացուցված է աթլետիկայի լրացուցիչ պարապմունքների արդյունավետությունը, որն արտահայտվել է ուսումնական տարվա ընթացքում դպրոցականների ֆիզիկական զարգացման՝ մասնավորապես թոքերի կենսական տարողության և շարժողական պատրաստության ցուցանիշների վիճակագրորեն հավաստի դինամիկ աճով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՑՆԵՐԸ:

1. 10-13 տարեկան դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների բացահայտված տվյալները վկայում են այդ տարիքի դեռահասների ֆիզիկական վիճակի ժամանակագրական կայունացման մասին:

2. Դպրոցականների ֆիզիկական վիճակի մշտադիտարկման արդյունքները և դրանց հիման վրա մշակված գնահատման մոդելային սանդղակները կարևոր նախադրյալ են արդյունավետ միջոցների հարմարվողականության, ինչպես նաև աթլետիկական վարժությունների կիրառման միջոցով շարժողական ընդունակությունների մշակման մեթոդիկայի համար:

3. Աթլետիկայի արտադասարանական պարապմունքների միջոցով շարժողական ընդունակություններ մշակելու մեթոդիկայի կիրառումը նպաստում է շարժողական ակտիվության աճին, մկանային ուժի, արագաշարժության, ցատկունակության, ճարպկության, դիմացկունության և շարժումների ճշգրտության զարգացման մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև աթլետիկա մարզաձևի կանոնավոր պարապմունքների պահանջմունքի ձևավորմանը:

4. Հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակության գործընթացի սպորտային կողմնորոշման համար կարևոր մանկավարժական պայման են արտադասարանական լրացուցիչ պարապմունքները, որոնք լուծում են առողջարարական, կրթական և դաստիարակության խնդիրներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: 5-7-րդ դասարանի աշակերտների ֆիզիկական դաստիարակության տեսությունը և մեթոդիկական հարստացել է մեթոդական առանձնահատկությունների վերաբերյալ նոր գիտելիքներով, որոնք ձեռք են բերվում աթլետիկայի արտադասարանական լրացուցիչ պարապմունքների ընթացքում: Ստացված տվյալները կարող են նախադրյալ հանդիսանալ ֆիզիկական այլ վարժությունների մեթոդական հարցերի մշակման համար և օգտագործվել մարզական ուղղվածություն ունեցող համապատասխան ուսումնական հաստատություններում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Որոշվել են 10-13 տարեկան դպրոցականների ֆիզիկական զարգացման դինամիկայի և շարժողական ընդունակությունների սեռատարիքային առանձնահատկությունները, մշակվել և մանկավարժական պրակտիկայում ներդրվել են սովորողների ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակներ, մշակվել են աթլետիկայի լրացուցիչ պարապմունքների ծրագրի բովանդակությունն ու մեթոդական առանձնահատկությունները: Տվյալ հետազոտության ծրագրային նյութերը կարող են կիրառվել ՀՀ հանրակրթական դպրոցների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացում, ինչպես նաև նոր ծրագրեր մշակելիս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության մատենագիտական ցանկից, գործնական առաջարկություններից և հավելվածից: Ատենախոսական աշխատանքը շարադրված է 128 էջում, ներառում է 24 աղյուսակ, 8 գծապատկեր, 1 նկար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված են թեմայի արդիականությունը, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

«Ուսումնասիրվող հիմնահարցի տեսական վերլուծությունը» խորագրով առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին (**Նորարարական տեխնոլոգիաները ֆիզիկական դաստիարակության համակարգում**) ենթագլխում ներկայացված է ֆիզիկական դաստիարակության համակարգում նորարարական տեխնոլոգիաների արմատավորման հարցերը: Ֆիզիկական դաստիարակության նորարարական ուղղություններին են պատկանում նաև անձնակողմնորոշիչ ֆիզիկական դաստիարակությունը, սպորտայնացումը և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը (Մտեփանյան Ա. Գ. 2014):

Ֆիզիկական դաստիարակության գործընթացն օպտիմալացնելու նպատակով տարբեր երկրներում մասնագետներն առաջարկում և փորձարկում են մեթոդաբանական տարբեր մոտեցումներ: Այդ մոտեցումների հիմքում ընկած է երիտասարդության առողջության ամրապնդման ու նրանց շարժողական ակտիվության բարձրացման խնդիրը (Кобяков Ю. П. 2003, Моченов В. П. 2007): Ընդ որում՝ յուրաքանչյուր տարիքային խմբի համար առաջարկվում են շարժողական ակտիվության տարբեր չափորոշիչներ: Այսպես, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը փաստում է, որ 5-17 տարեկանում պետք է անցկացնել ֆիզիկական վարժությունների ամենօրյա համակարգված պարապմունքներ՝ 60 րոպեից ոչ պակաս տևողությամբ, իսկ կատարվող շարժումները պետք

է ունենան անբարձրագույն ուղղվածություն (Сухарева С. М. 2015), այսինքն՝ զարգացնեն շնչառական համակարգի գործունեության հնարավորությունները:

Երկրորդ **(Աթլետիկական վարժությունները ֆիզիկական դաստիարակության համակարգում)** ենթազվիում ներկայացվում է աթլետիկական վարժությունների կարևորությունը բնակչության առողջ ապրելակերպի և ֆիզիկական դաստիարակության համակարգում առաջնային դերի մասին: Բեռնվածության փոփոխության հնարավորությունները վազքում, ցատկերում, նետումներում հնարավորություն են տալիս հաջողությամբ կիրառել դրանք տարբեր տարիքի և սեռի անձանց հետ անցկացվող պարապմունքների ժամանակ: Այդ իսկ պատճառով վազքը, ցատկերը, նետումներն իրենց տեղն են գտել նաև նախադպրոցական կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների, քոլեջների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, Ազգային բանակի, ուժային կառույցների ֆիզիկական դաստիարակության ուսումնական ծրագրերում:

Աթլետիկան, լինելով մատչելի բոլորի համար, իրականացնում է հետևյալ հիմնական գործառնությունները՝ առողջարարական, դաստիարակչական, կիրառական, կրթական:

Երրորդ **(Արտադասարանական պարապմունքները՝ որպես դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացման միջոց)** ենթազվիում խոսվում է վերջին շրջանում աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, դպրոցականների առողջության, ֆիզիկական զարգացման ու շարժողական պատրաստվածության ցածր մակարդակից, ինչը լուրջ վտանգ է ներկայացնում ազգի գենֆունդի համար: Այսպես, Ռուսաստանի դպրոցականների 53 %-ը ունի առողջության զարգացման ցածր մակարդակ, 67 %-ը՝ խրոնիկական հիվանդություններ (Шолохова А. Н. 2009, Матвеева М. 2014): Մոնղոլիայի երեխաների 40-50 %-ի մոտ ֆիզիկական վիճակը չի հասնում միջին մակարդակի (Лхагвасурен А. 2014), Ուկրաինայի դպրոցականների մոտ 70 %-ը ունեն ֆիզիկական զարգացման միջինից ցածր և ցածր մակարդակ (Андреева Е. 2014): Հայաստանի դպրոցականների 50 %-ի մոտ նկատվում է դյուրագրգռություն, հոգնածություն, 30 %-ը ունեն այս կամ այն հիվանդությունները, 23 %-ը ունեն քաշի անբավարարություն, 15 %-ը՝ ավելորդ քաշ (Саркисян С. 2011): Դպրոցն ավարտելու պահին լիարժեք առողջությունը պահպանում են աշակերտների 10 %-ից պակասը (Собеседник Армении 2012.- № 39):

Արտադասարանական պարապմունքների այս տեսակների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում աթլետիկան՝ որպես մարզաձև և որպես սովորողների ֆիզիկական կատարելագործման միջոց՝ ցատկերի, վազքի, նետումների տեսքով: Այս առումով ֆիզկուլտուրային կրթության համակարգում անգնահատելի է այս մարզաձևի դերն ու նշանակությունը: Մեթոդական նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆիզիկական կուլտուրայի 2-3 դասաժամը չի բավարարում սովորողների ֆիզիոլոգիապես անհրաժեշտ շարժողական պահանջմունքներին (Карпушин Б. А. 1963, Борилкевич В. Е. 1965, Вальбекене В. Ч. 1980, Бразиче Э. К. 1985, Тертичный А. В. 1986, Бабкин А. И. 1996, Гузов Н. М. 1990): Դրա բացատրությունն այն է, որ կատարվող աշխատանքի խտությունը դասերի ժամանակ տատանվում է միջինը 62.4 %-ից մինչև 69.6 % (Мруц И. Д., Русу В. И. 2011), այդ պատճառով անհրաժեշտ է ընդլայնել արտաժամյա ֆիզկուլտուրա-առողջարարական աշխատանքների քանակը: Որպես կանոն խորհուրդ է տրվում ֆիզիկական դաստիարակության արտադասարանական պարապմունքներն անցկացնել շաբաթական 1-2 անգամ՝ 45-60 րոպե տևողությամբ (Сотникова А. Г. 1990, Панкова Н. Б. с соавт. 2011, Боева М. М. 2013):

Չորրորդ **(Դպրոցականների սեռատարիքային զարգացման առանձնահատկությունները և ֆիզիկական դաստիարակությունը)** ենթազվիում խոսվում է դպրոցականների

ֆիզիկական դաստիարակության և մարզական պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող տարիքային պարբերականացման սահմանների որոշման մասին (Лесгафт П. Ф. 1882-1883, Бальсевич В. К. 2000):

Ֆիզիկական դաստիարակության գերծրնթացի բովանդակությունը, ֆիզիկական բեռնվածության ծավալը և լարվածությունը, պայմանավորված են դպրոցականների տարիքով, սեռով և ֆիզիկական պատրաստության մակարդակով: Գիտական հետազոտությունների տվյալները վկայում են, որ մարդու շարժողական ներուժն ինտենսիվ զարգանում է կյանքի առաջին երկու տասնամյակներում (Аршавский И. А. 1975, Бальсевич В. К. 2000, Фомин Н. А. 2003): Ուստի մեր աշխատանքի հաջող իրականացումը պահանջում է դպրոցահասակ երեխաների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստության օրինաչափությունների որոշում և դրա հետ կապված գիտական խնդիրների առավել խորը ուսումնասիրություն:

«10-13 տարեկան դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը» խորագրով առենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից:

Այս գլխում հետազոտվել է քննարկվել են 10-13 տարեկան դպրոցականների մարդաբանական կարգավիճակի վերաբերյալ խնդիրները՝ ըստ սեռատարիքային համեմատության, ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշների և շարժողական կարևոր ընդունակությունների: Ստացված տվյալների հիման վրա մշակվել են գնահատման մոդելային սանդղակներ:

Առաջին (**Հետազոտության խնդիրները, մեթոդները, քանակակազմը և կազմակերպումը**) ենթագլխում նկարագրված են հետազոտության մասնակի խնդիրները, գրական աղբյուրների տեսական վերլուծությունը և ընդհանրացումը, մարդաբանական չափումները (մարմնի քաշը, հասակը և կրծքավանդակի շրջագիծը), թոքերի կենսական տարողությունը (ԹԿՏ), մանկավարժական թեստավորումը, որը նախատեսում է դեռահաս դպրոցականների շարժողական պատրաստության մակարդակի գնահատում: Որոշվել է՝ արագաշարժությունը, դիմացկունությունը, արագաուժային ընդունակությունները, ցատկունակությունը, ճարպկությունը, շարժումների ճշգրտությունը:

Երկրորդ (**Երկսեռ դեռահասների ֆիզիկական զարգացման մակարդակի գնահատումը**) ենթագլխում ամփոփվել են դեռահաս դպրոցականների ֆիզիկական զարգացման մշտադիտարկման արդյունքները, որոնք ցույց տվեցին, որ 10-13 տարեկանում երկսեռ աշակերտների մոտ կայուն բարելավում է տեղի ունեցել բոլոր ցուցանիշներում՝ մարմնի հասակ, քաշ, կրծքավանդակի շրջագիծ: Բոլոր դեպքերում ցուցանիշները տղաների մոտ ավելի բարձր էին, քան աղջիկների մոտ: Ստացված տվյալների վերլուծության արդյունքները հաստատում են, որ ըստ տարիքի էապես փոփոխվում են 10-13 տարեկան տղաների մարմնի երկարության ցուցանիշները ($P > 10,1$ -ից): Աղջիկների մոտ նկատելի տեղաշարժեր են դրսևվորվում մինչև 12 տարեկանը, իսկ տարբերությունները, համեմատած 13 տարեկանների, էական չեն. այս տարիքում նրանց մարմնի երկարությունը ավելանում է ընդամենը 1,5 սմ-ով ($P < 5$ -ից):

Այսպես, երկսեռ դպրոցականների մոտ մարմնի հասակի ցուցանիշները բարձրանում են 5-6,5 սմ-ով, իսկ մարմնի քաշը՝ 8 կգ-ով: Բնչ վերաբերում է կրծքավանդակի շրջագծին, ապա պետք է նշել, որ եթե 10-11 տարեկանում երկսեռ դեռահասների մոտ այս մեծությունները գրեթե հավասար են, ապա 12-13 տարեկանում աղջիկների ցուցանիշները մոտավորապես 2 սմ-ով ավելի են: Այսպիսով, բացահայտվել են փաստեր երկսեռ դեռահասների ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշների

անհամաչափ և ոչ միատեսակ տարիքային բարելավման վերաբերյալ: Այսպես, էթե տղաների և աղջիկների մարմնի հասակի (13.41 սմ, 12.99 սմ) և քաշի (12.41 կգ, 12.15 կգ) ցուցանիշների տարիքային փոփոխությունները մոտավորապես միատեսակ են, ապա կրծքավանդակի շրջագծի տարիքային տեղաշարժերի ցուցանիշների (8.7 սմ և 12.37 սմ) մեջ գերակշռում են դեռահասության տարիքի աղջիկները, իսկ տարբերությունը, տղաների համեմատությամբ, կազմում է 3.67 սմ: Թոքերի կենսական տարողության ցուցանիշների տարիքային տեղաշարժերի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել հետևյալը. ըստ բացարձակ արժեքի՝ տղաների շնչառական կարողությունները մի փոքր ավելի են: 10-13 տարեկանում աճը կազմում է համապատասխանաբար 325 մլ և 328 մլ: Այդ նույն ժամանակահատվածում թոքերի կենսական տարողության ցուցանիշների աճի տեմպերը ևս, սեռային հարաբերակցությամբ, գրեթե միատեսակ են:

Երրորդ (Երկսեռ դեռահասաների շարժողական ընդունակությունների զարգացման համեմատական տվյալները) ենթազվիտում քննարկվել է մշտադիտարկման մասնակից, 10-13 տարեկան դեռահաս դպրոցականների շարժողական պատրաստության մակարդակը, որը որոշվել է հետևյալ վարժությունների ցուցանիշներով. վազք՝ 20 մ ընթացքից, վազք՝ տղաներ՝ 1000 մ, աղջիկներ՝ 500 մ, մաքոքավազք՝ 3x10 մ, տեղից հեռացատկ, վերցատկ Աբալակովի մեթոդով և թենիսի գնդակի նետում թիրախին վարժությանունների միջոցով: Հետազոտությանը մասնակցել է երկսեռ 560 աշակերտ:

Ստացված արդյունքների վերլուծությունը (Աղ. 1.) ցույց տվեց, որ 10-13 տարեկանում արագաշարժությունը, դիմացկունությունը, ճարպկությունը, ցատկունակությունը, շարժումների ճշգրտությունը և արագաուժային ընդունակությունների արդյունքները երկսեռ դպրոցականների մոտ նկատելի բարելավվել են:

Աղյուսակ 1.

Արական սեռի դպրոցականների շարժողական պատրաստվածության տարիքային փոփոխությունները (n=280)

Տարիք	Վազք՝ 20 մ ընթացքից (վրկ.)			Վազք՝ 1000 մ (վրկ.)			Մաքոքավազք՝ 3x10 մ (վրկ.)		
	$\bar{x} \pm m$	t	P %	$\bar{x} \pm m$	t	P %	$\bar{x} \pm m$	t	P %
10	3,93±0.06	-	-	303,94±1.24	-	-	9,40±0.06	-	-
11	3,63±0.05	4.28	>0.1	299,60±2.07	1.94	<5	8,97±0.06	5.37	>0.1
12	3,59±0.04	0.66	<5	293,13±1.89	2.23	>5	8,91±0.08	1.7	<5
13	3,51±0.04	1.33	<5	289,43±1.84	1.40	<5	8,86±0.08	2.54	>5
Տարիք	Տեղից հեռացատկ (սմ)			Վերցատկ՝ Աբալակովի մեթոդով (սմ)			Թենիսի գնդակի նետում թիրախին (միավոր)		
10	150.74±1.57	-	-	31.56±0.73	-	-	11.20±0.37	-	-
11	153.97±1.84	1.34	<5	38.74±0.98	5.88	>0.1	12.63±0.39	2.69	>1
12	158.52±2.19	1.59	<5	41.61±0.78	2.29	>1	13.59±0.41	2.37	>5
13	163.41±2.04	1.63	<5	43.89±0.74	2.13	>5	14.24±0.46	1.06	<5

Շարժողական բոլոր ընդունակությունների արդյունքներով տղաները գերազանցում են աղջիկներին: Այս տվյալները համապատասխանում են աճող օրգանիզմի շարժողական ֆունկցիայի տարիքային զարգացման օրինաչափություններին: Միևնույն ժամանակ առանձին շարժումների արդյունքների աճը, 10-13 տարեկանն ընկած ժամանակահատվածում, երկսեռ դպրոցականների մոտ միատեսակ չէ:

Այսպես, օրինակ՝ վազք՝ 20 մ ընթացքից (0,42 և 0,32 վրկ.) և մաքոքավազք՝ 3x10 մ (0,54 և 0,49) արդյունքների աճով տղաները գերազանցում են աղջիկներին: Երեք տարվա

ընթացքում տղաների համեմատությամբ աղջիկների արդյունքները մի փոքր գերազանցում են տեղից հեռացատկ և վերցատկ վարժություններում, օրինակ՝ տեղից հեռացատկի դեպքում այն կազմում է 2.65 սմ, իսկ վերցատկում՝ 0.46 սմ: Դիմացկունությունը գնահատող վազքի դեպքում տղաների և աղջիկների միջև եղած տարբերությունը կազմում է 1,2 վրկ.: Պետք է նշել, որ այս տարբերությունները վիճակագրորեն վավերացված չեն: 10-13 տարեկանում երկսեռ դպրոցականների մոտ 3 միավորով բարելավվել են շարժումների ճշգրտությունը գնահատող թենիսի գնդակի նետում վարժության արդյունքները:

Աղյուսակ 2.

Իգական սեռի դպրոցականների շարժողական պատրաստվածության տարիքային փոփոխությունները (n=280)

Տարիք	Վազք՝ 20 մ ընթացքից (վրկ.)			Վազք՝ 500 մ (վրկ.)			Մաքոքավազք՝ 3x10 մ (վրկ.)		
	$\bar{x} \pm m$	t	P %	$\bar{x} \pm m$	t	P %	$\bar{x} \pm m$	t	P %
10	4,05±0.06	-	-	193,19±2.34	-	-	9,85±0.04	-	-
11	3.98±0.05	1.0	<5	189,20±1.84	1.34	<5	9,60±0.06	3.57	>0.1
12	3.78±0.03	4.0	>0.1	181,13±1.76	3.14	>1	9,50±0.08	1.0	<5
13	3.73±0.04	1.0	<5	177,53±1.32	2.09	>5	9,36±0.08	1.4	<5
Տարիք	Տեղից հեռացատկ (սմ)			Վերցատկ՝ Աբալակովի մեթոդով (սմ)			Թենիսի գնդակի նետում թիրախին (միավոր)		
10	141.41±1.45	-	-	29.31±0.81	-	-	9.81±0.35	-	-
11	150.11±2.09	3.42	>0.1	36.70±0.92	6.05	>0.1	10.53±0.38	1.41	<5
12	155.46±1.81	1.94	<5	40.67±0.86	3.18	>1	12.14±0.46	2.72	>1
13	156.73±1.07	1.30	<5	42.10±0.60	1.13	<5	12.83±0.41	1.13	<5

Ինչ վերաբերում է շարժողական ընդունակությունների ցուցանիշների դինամիկայում առկա միջտարիքային տարբերություններին, ապա այստեղ էլ այդ մեծությունները բոլորովին տարբեր են: 10-11 տարեկան տղաների մոտ ակնհայտ տեղաշարժեր են նկատվում 20 մ ընթացքից վազքում և 3x10 մ մաքոքավազքում, իսկ հասակակից աղջիկների մոտ՝ տեղից հեռացատկ, 20 մ ընթացքից վազք և 3x10 մ մաքոքավազք վարժություններում: Միջտարիքային փոփոխությունները որոշ չափով զգալի են տղաների մոտ. նետում թիրախին՝ 10-11 տարեկանում, վերցատկում՝ 11-12 տարեկանում (P>1-ից), իսկ 11-12 տարեկան աղջիկների մոտ՝ դիմացկունությունը գնահատող վազքում, վերցատկում և նետում թիրախին վարժություններում (P>1-ից):

Նկատելի արդյունքներ են ստացվել շարժողական ընդունակությունների ցուցանիշների դինամիկայում, 10-13 տարեկան երկսեռ դպրոցականների շրջանում արագաշարժության, շարժումների ճշգրտության և այլ ընդունակությունների աճի տեմպերի վերլուծության ժամանակ: Այստեղ նույնպես պատկերն անհամաչափ է, սակայն երկսեռ դեռահասների շրջանում ցուցանիշներն ինչ-որ չափով համընկնում են: Ներկայացված տվյալներից երևում է, որ ցուցանիշների աճի առավելագույն տեմպերը երկսեռ դեռահասների մոտ նկատվում է 10-11 տարեկանում՝ 20 մ ընթացքից վազքի, 3x10 մ մաքոքավազքի և վերցատկի վարժությունների արդյունքներով: Տղաների մոտ, բացի դրանից, ճարպկության, արագաուժային ընդունակությունների և ըստ թիրախի նետումների ճշգրտության գարգացման առավելագույն տեմպերը նույնպես դրսևորվում են 10-11 տարեկանում:

Աղջիկների մոտ աճի առավելագույն տեմպերը դրսևորվում են 11-12 տարեկանում՝ արագաշարժությունը, դիմացկունությունը գնահատող 500 մ վազքի, 3x10 մ մաքրավազքի և շարժումների ճշգրտության մեջ: Այսպիսով, տարիքային տարբեր ժամանակահատվածներում աճի տեղաշարժերը միատեսակ չեն: 10-11 տարեկանում աճի առավելագույն տեմպեր տղաները ցուցաբերում են 20 մ ընթացքից վազքում, ճարպկության, արագաուժային ընդունակությունների, ցատկունակության և շարժումների ճշգրտության մեջ, իսկ աղջիկները՝ 20 մ ընթացքից վազքում և ցատկունակության մեջ: 11-12 տարեկանում երկուսն էլ դարձնակունակության, ճշգրտության, ճարպկության ցուցանիշներում, ինչպես նաև աղջիկների մոտ արագաշարժության ցուցանիշներում: 12-13 տարեկանում ուսումնասիրվող ցուցանիշների ցայտուն արտահայտված տեմպեր գրեթե չեն նկատվել:

Չորրորդ (Ղեռահաս դպրոցականների ֆիզիկական վիճակի մոդելային սանդղակների մշակման հնարավորությունները մանկավարժական գործընթացում) ենթազվխում ներկայացված է տարբեր սեռատարիքային խմբերի ղեռահաս դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստության գնահատականի և մակարդակի չափանիշների որոշուման մեխանիզմները, որը ֆիզիկական դաստիարակության տեսության և պրակտիկայի կարևոր խնդիրներից է: Գնահատելու և շտկումներ կատարելու ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

Ատենախոսության երրորդ գլուխը որը կրում է «**Ղեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության փորձարարական ծրագրի ներդրման արդյունքները**» խորագիրը, ներկայացվել և քննարկել ենք մի շարք հանգուցային հարցեր, որոնք վերաբերում են ֆիզիկական դաստիարակության գործընթացի օպտիմալացմանը՝ արտադասարանական աթլետիկական վարժությունների կիրառմամբ:

Առաջին (**Հետազոտության խնդիրները, մեթոդները, քանակակազմը և կազմակերպումը**) ենթազվխում բնութագրված են հետազոտության մասնակի խնդիրները, սոցիոլոգիական հարցումը, աշխատունակության գնահատումը՝ Ռուֆեի թեստի օգնությամբ, ուշադրության կենտրոնացման և ընկալման գնահատումը՝ Շուլտեյի թեստի միջոցով և մանկավարժական գիտափորձ՝ առաջ քաշված գիտական վարկածի վերաբերյալ:

Երկրորդ (**«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ և ծրագրի վերլուծությունը**) ենթազվխում վեր է հանվում գործող ծրագրում 5-7-րդ դասարանների համար նախատեսված բազային ուսումնական նյութի և աթլետիկա բաժնի բովանդակության տոկոսային վերլուծությունը:

Աթլետիկան հենակետային մարզաձև է, իր մեջ ներառում է երեխայի ու ղեռահասի ֆիզիկական զարգացման և լիարժեք կյանքի համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչները՝ քայլքը, վազքը, ցատկերը և նետումները, հետևաբար պահանջում է առավել ընդլայնված և խորը ուսումնասիրություն: Մյուս կողմից, աթլետիկական վարժությունները պահանջում են շարժողական բոլոր ընդունակությունների դրսևորումներ, որն էլ, ըստ էության, որոշում է սովորողների ֆիզիկական կատարելագործման ուղղվածությունը դպրոցական օնտոգենեզի շրջանում: Միևնույն ժամանակ աթլետիկա բաժնի ուսումնական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցման ընթացքում գրեթե չեն պահպանվում աթլետիկական վարժությունների կիրառման տարատեսակությունը և հաջորդականությունը: Մեզ հետաքրքրող դասարանների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դպրոցական ծրագրի վերլուծության արդյունքները ներկայացված են թիվ 3 աղյուսակում:

Աղյուսակ 3.

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափոչափի և ծրագրի վերլուծությունը


Նյութի բովանդակությունը	V դասարան		VI դասարան		VII դասարան	
	Ժամ	%	Ժամ	%	Ժամ	%
Գիտելիքների հիմունքներ	6	5,9	6	5,9	6	5,9
Մարմնամարզություն	16	15,7	16	15,7	16	15,7
Աթլետիկա	16	15,7	16	15,7	16	15,7
Մարզախաղեր	24	23,5	24	23,5	24	23,5
Ֆուտբոլ	32	31,3	32	31,3	32	31,3
Ընտրովի ուսումնական նյութ	8	7,9	8	7,9	8	7,9

Աղյուսակում ներկայացված տվյալների համաձայն՝ 5-7-րդ դասարաններում աթլետիկային հատկացվում է 16 դասաժամ: Զգալիորեն ավելի շատ է հատկացվում մարզախաղերին (24 դասաժամ) և ֆուտբոլին (32 դասաժամ): Դրանից ելնելով՝ մենք կարծում ենք, որ հիմնավորված չէ պետական դպրոցական ծրագրում ֆուտբոլին հատկացնել երկու անգամ ավելի շատ դասաժամ, քան աթլետիկային: Հետազոտության ընթացքում անհրաժեշտ եղավ վերլուծել նաև «Աթլետիկա» ուսումնական նյութի բովանդակությունը՝ (տոկոսային հարաբերակցությամբ) ըստ շարժողական ընդունակությունների ուղղորդված մշակման: Այդ նպատակով վերլուծության է ենթարկվել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի գործող պետական ծրագրի 5-7-րդ դասարանների համար նախատեսված աթլետիկական վարժությունների բովանդակությունը:

Աթլետիկական վարժությունների ծրագրային նյութի վերլուծությունից պարզվեց որ բավականին շատ կիրառվում են աթլետիկական այն վարժությունները, որոնք նպաստում են արագաշարժության և ցատկունակության մշակմանը: Մի փոքր պակաս են կիրառվում ճարպկություն, ճշգրտություն, դիմացկունություն մշակող վարժությունները, սակայն, ըստ շարժողական առանձին ընդունակությունների, այս ուղղվածությունը տարբեր դասարաններում միատեսակ չէ: Օրինակ՝ արագաշարժությունը զարգացնող վարժությունները 5-րդ դասարանում կազմում են 33,4 %, 6-րդ դասարանում՝ 25 % և 7-րդ դասարանում՝ 27,4 %: Արագաուժային ընդունակությունների մշակմանն ուղղված վարժությունները դասարանից դասարան փոխադրվելուն զուգընթաց ավելանում են՝ 12,5 %-ից մինչև 18,2 %: Համանման պատկեր բնորոշ է նաև դեռահասության տարիքի դպրոցականների դիմացկունության ցուցանիշին. այս մեծություններն աճում են՝ 11,1 %-ից 18,2 %: Միևնույն ժամանակ 5-7-րդ դասարաններում աթլետիկական վարժությունների կազմում նկատվել է շարժողական հետևյալ ընդունակությունների նվազման միտում: Այսպես, ցատկունակությունը նվազել է 33,3 %-ից մինչև 18,2 %, ճարպկությունը և շարժումների ճշգրտությունը՝ 11,1 %-ից մինչև 9 %: Բնականաբար, դպրոցական ծրագրի աթլետիկայի բաժնի վերլուծության արդյունքները հիմք են հանդիսացել մանկավարժական գիտափորձի կազմակերպման համար՝ լրացուցիչ արտադասարանական պարապմունքների ժամանակ հատուկ մշակված աթլետիկական վարժությունների կիրառմամբ: Դա վերաբերում է նաև այդ պարապմունքների ընթացքում շարժողական ընդունակությունների առարկայական մշակմանը:

Երրորդ (**Սոցիոլոգիական հարցման արդյունքները**) ենթազվածում ներկայացված է սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը որին մասնակցել են հանրապետության տաս մարզերի ինչպես նաև Երևանի, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 260 ուսուցիչ: Սոցիոլոգիական հարցումը նպատակ է հետապնդել բացահայտել ֆիզիկա-

կան կուլտուրա առարկայի շրջանակներում աթլետիկական վարժություններին հատկացված դասաժամերի քանակի, կարևորության և դպրոցականների նախասիրության մասին: Ստացված տվյալները տոկոսային հարաբերությամբ ներկայացված են գծապատկերում:



Գծապատկեր 1. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների սոցիոլոգիական հարցման արդյունքները. (տոկոսով)

1. Աթլետիկական վարժությունները կատարվում են մեծ հետաքրքրությամբ:
2. Նախապատվությունը տրվում է քայլքին:
3. Նախապատվությունը տրվում է վազքին:
4. Նախապատվությունը տրվում է ցատկին:
5. Նախապատվությունը տրվում է նետմանը:
6. Անհրաժեշտ է ավելացնել աթլետիկական վարժություններին հատկացվող դասաժամերը տարրական դասարանն.:
7. Անհրաժեշտ է ավելացնել աթլետիկական վարժություններին հատկացվող դասաժամերը միջին դասարաններում:
8. Անհրաժեշտ է ավելացնել աթլետիկական վարժություններին հատկացվող դասաժամերը ավագ դասարաններում:
9. Դպրոցական ծրագրի աթլետիկա բաժնում անհրաժեշտ է ավելացնել վազքի վարժությունների ծավալը:
10. Դպրոցական ծրագրի աթլետիկա բաժնում անհրաժեշտ է ավելացնել ցատկի վարժությունների ծավալը:

Չորրորդ (Ուսումնական փորձարարական ծրագրի մշակում) ենթազվխում ներկայացված է մեր կողմից մշակված 5-7-րդ դասարանի աշակերտների աթլետիկական վարժությունների կիրառմամբ արտադասարանական պարապմունքների փորձարարական ծրագիրը՝ կազմված համապատասխան երաշխավորագրերի և սեփական հետազոտությունների տվյալների համաձայն:

Հինգերորդ (Աթլետիկական ուղղվածության արտադասարանական ուսումնական ծրագրի ներդրումը դպրոցական ֆիզիկական դաստիարակության գործընթացում) ենթազվխում ներկայացված են 5-7-րդ դասարանի աշակերտների ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների ցուցանիշները գիտափորձի արդյունքում: Մեր կողմից կազմված աթլետիկական վարժությունների ծրագրով արտադասարանական պարապմունքների մանկավարժական գիտափորձի անցկացումը տևել է 8 ամիս: Մանկավարժական գիտափորձում ընգրկվել է 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարան-

